Երիտասարդն երբոր տեսաւ որ բանը յաջողեցաւ, մէկէն երեսի դոյնը տեղը եկաւ, ու սկսաւ գոհ սրտով ուրախանալ. մէկէն զինուորագրութեան թղթին մէջ իր անունը ստորագրեց, ստակը առաւ, և խոստացաւ ալ որ նախքան իրեն ճամբայ ելլելը ինքը կը դառնայ կու գայ։

Զօրապետը ամենեին դէմ չկեցաւ անոր կամացը. բայց ուզեց իմանալ թէ աս կարգէ դուրս դիպուածը արդեօք ինչ պիտի ըլլայ. ուստի երբոր անիկայ գնաց, ինքն ալ անոր ետևէն սկսաւ երթալ ծածուկ, և ինչուան բանտի մը դուռը այնպէս ետևէն գնաց։ Երբոր երիտասարդը բանտէն ներս մտաւ, ինքն ալ անոր ետևէն մտաւ, տեսաւ որ երիտասարդը բանտապետին կ'ըսէր թէ Ահաւասիկ քեզի 500 լիրէն՝ որուն համար հայրս բանտ մտած է. ահա ես քու ձեռքդ կը դնեմ ան ստակները, միայն զիս իրեն տար, կ'ուզեմ որ ես իմ բերնովս աւետեմ իրեն ազատութիւնը։

Աս երբոր տեսաւ զօրապետը՝ զարմացաւ. բայց քիչ մը ատեն ալ համբերեց, որպէս զի ինչուան բանտարկեալին սենեակը մտնէ։ Ներս մտնելուն պէս տեսաւ որ ան նոր զօրականը մէկ ծերու մը պլլուած արցունքներ կը թափէր ու կը պագնէր, և միանգամայն իրեն կ'աւետէր որ զինքը ազատելու համար՝ ինքը իր ազատութիւնը ծախեց։

Ան միջոցին զօրապետին սիրտը սաստիկ շարժելով յանկարծ խուցէն ներս մտաւ, ու երկուքին մէկէն ըսաւ. «Անկարելի է որ ես մէկ հայր մը այսպիսի սիրտ ունեցող որդիէ մը բաժնեմ. կ'ուզեմ որ աս գեղեցիկ գործքին ինքն ալ մասնակից ըլլայ. քեզի կ'ըսեմ բարի ծեր, որդիդ ալ քեզի պէս ասկէ վերջը ազատ է. 500 լիրէ տալուս վրայ ամենեին չեմ ցաւիր, երբոր միտքս կը բերեմ որ բարի վախճանի մը համար տուի. ահաւասիկ իրեն զինուորագրութեան թուղթը քու առջևդ կը պատռեմ։

Մէկէն երկուքն ալ իրենց առատաձեռն բարերարին ոտքը ինկան։ Բայց տղան ոտք կոխեց որ ինքը ազատ չըլլայ. և վերջապէս պարտաւորեց զզօրապետը որ դէթ մէկ տարի մը թող տայ իրեն ծառայելու, ան ալ ակամայ յանձն առաւ։ Երբոր զօրաց մէջ մտաւ, կը թուած քաջ զինուորի մը պէս այնպէս կատարեց իրեն պարտքը. և երբեմն երբեմն իր բերնէն կորելով իր հօրը մանր մունր օգնութիւններ ալ կը խաւրէր. երբոր տարեգլուխը եկաւ արձակման հրաման առնելով՝ դարձաւ յաջողութեամբ իր հօրը գերկը։

Օդոստոս.

Ի յօդոստոս ամսոյս արժան է զհասած այգիքն կլթեն. ապա թէ չլինի 'ի հասցնել՝ նա փորէ. և զփոշին՝ որ 'ի փորչէն և 'ի դղյանն 'ի մանրեալցն[1] ելնէ և 'ի խաղողն հանի, հասցնէ զխաղողն որպէս յառաջ գրեցաք. և միտ դիր՝ որ ծառ և այգի որ ճանապարհի մօտ լինի, և փոշի յիւր վրայ նստի՝ շուտ հանի. նոյնպէս և ամենայն այգի որ 'ի ծանր գետին կենայ՝ 'ի չորն պատեհ է որ փորուի. բայց թէ նօսր լինի չքընէ, և 'ի գիճային գետինն չէ պարտ զտունկն խորու[2] տնկել, թէ ոչ՝ նեխեցընէ գետինն։ Եւ այգի որ այս ամիսս չհասցնէ, դու ծայրատէ և տերևն թափէ, որ բանուի խաղողն և հասցնէ առեղակն. և տես թէ այգին նորատունկ լինի և շատ բեր առնու՝ չհասիրիս[3] 'ի բերրն. ծայրատէ կարճ, և 'ի բերէն հետուռին կորէ, և թեթևացս քանի կըտրես զբերն, և թէ ոչ՝ այգին վատուժէ. և զնոյնքն 'ի յայլ տարիքն տայ. և թէ առնես խաղողի պտուղն մեծ լինայ, և այգին ուժով գայ։ Այլ և սուռ սպունգ և գիր յեղէգն և թաց 'ի ջուրն, և ըզպատրուսած ծառերն յայս ամիս թաց

1 Ի մանրեալ հողոյն։
2 Խորունկ։
3 Թուի Ի ագահեր կամ էգագէր։

անպատճառ. և զպահելոյ խաղողն յայս ամիսս քաղէ և կախէ. և զպահելոյ թուզն յայս ամիսս չորացո։ Եւ ուր աշունն որ ձիթենի կամենաս տնկել, նա դու զփոսն ծառին 'ի յայս ամիսս արա և բաց, նոյնպէս և զայլ աշընտունկ ծառանցն. և 'ի բաց թող զփոսերն որ արքն այրէ և շինէ, որ երբ տնկես՝ արքիացնէ զտունկն։ Նոյնպէս և զգինոյ համար կարատնին՝ յայս ամիսս արևէ, անօսէ և ձիւթէ՝ նոր գինոյն համար։

Ի ՎԱՍՏԱԿՈՑ ԳՐՈՑ

ՏԵՍԱՐԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՅԵՂԻ

ՈՎԿԻԱՆԻԱ

Նոր Զեղանտա ըսուած աշխարհը՝ մասն է Բոլինեզիայի որ Արևելեան Ովկիանիա ալ կ'ըսուի, և երեք կղզիներէ ձեւացած է, որոնց երկուքը մեծ են և իրարմէ Գուք նեղուցով բաժնըւած, և երրորդը պզտիկ՝ որ Ֆոքոյ նեղուցով կը բաժնուի։ Կլիման ցուրտ է. երկիրը՝ նոր տեսակ բոյսերով՝ կենդանիներով և թռչուններով զարդարուած է. բնակիչքը՝ բարձրահասակ և կորիճ մարդիկ են, մորթերնին սեւագոյն. բնութեամբ՝ վրէժխնդիր. յանկարծ յանկարծ կը յարձրկին Եւրոպացւոց վրայ՝ որոնց հետ անհաշտ թշնամութիւն ունին, կը սպաննեն անխնայ՝ և մարմիններն ալ կ'ուտեն։ Ընդհանրապէս բազմակին են. զգեստ հագնելու սովորութիւն չունին, միայն կապերտի կտոր մը կը ձգեն մէջքերնէն վար. դէմքերնին՝ գոյներով կը ներկեն, ապարանջաններով և մանեակներով կը զարդարուին։ Հիւղերու մէջ կը բնակին՝ զորոնք ծառի կեղևներէ կը շինեն ցիցերով հաստատած։

Մինչին կղզւոյն բնակիչքն աւելի կըրթուածներն են, և 4,000 հոգի են. իսկ հիւսիսային կողմի կղզւոյն բնակիչքը գունդ գունդ կը բնակին՝ իրենց սեփական իշխաններ առաջնորդ ունենալով։ Կերակուրնին գետնախնձոր է, վայրի պտուղներ, արմատք, ձուկ. ինչուան վաթսուն ոտնաչափ երկայնութեամբ նաւակներ կը շինեն, առագաստ և թիւ գործածել գիտեն։ Պատերազմի զէնքերնին են նիզակ, տապար և լախտ, և ուրիշ զէնքերն ալ Եւրոպացւոցմէ կ'առնեն՝ իրենց երկրին բերքերուն հետ փոխանակելով։ Մէջերնին միշտ կռիւ է. մեռելնին կը թաղեն. անձնասպանութիւնը անտարբեր բան մը սեպուած է մէջերնին։

Հիւսիսային կողմի կղզւոյն մէջ կը կարծուի որ 400,000 բնակիչ գտնուի. 1815ին Մէրզտէն քարոզիչը հոն գաղթականութիւն մը հաստատելով՝ դըպրոց մըն ալ կանգնեց, ուր որ հիմա բազմութիւն աշակերտներ կը սորվին, և քրիստոնէութիւնը կը տարածուի այն հեթանոս բարբարոսներուն մէջ։

Արևելեան Ովկիանիայի կղզիներէն են Բարեկամաց կամ Դոնկա կղզիք ըսուածներն ալ, որ ընդ ամենը 150 հատէն աւելի են. հրաբուխներ ունին, և այն պատճառաւ ալ գետնաշարժն անպակաս է։ Բնակիչքը բարձրահասակք են, ուժով, մաղտ, մեծ աչքերով. բնաւորութիւننին կակուղ, կեղծաւոր, և գող։ Շատ կը գործածեն Գաթա ըսուած ըմպելիքը՝ զոր պղպեղի արմատէ կը հանեն, ձկնորսութեան և հողագործութեան մէջ ճարտար են. երիկ մարդիկ մերկ կը պտտին, իսկ կանայք մէջքերնէն վար լաթ մը կը ձգեն. մարմինները կը ներկեն ճերմակ կամ կարմիր